ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

03. 07. 2015 N

# ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

*ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ*

***Կոտայքի մարզի հարգարժա՛ն բնակիչներ***

Ջերմորեն շնորհավորում եմ Սահմանադրության օրվա կապակցությամբ և փաստում, որ տոնական այս օրն իրավամբ համարվում է մերօրյա պատմության նշանակալի և արժեքավոր իրադարձություններից մեկը:

Շնորհավորանքներին զուգահեռ անհրաժեշտ եմ համարում հերթական անգամ ընդգծել Սահմանադրության առանցքային դերն ու կարևորությունը հայրենի պետականության կայացման բոլոր գործընթացներում:

Վստահ եմ, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության առավել կատարելագործմանը միտված բարեփոխումների գործընթացը ևս կունենա իր ցանկալի արդյունքը՝ դրական ազդակներ հաղորդելով հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներին:

Կրկին շնորհավորելով Սահմանադրության օրվա առթիվ՝ մաղթում եմ, որ հետագա տարիներին ևս մեր երկրում արդյունավետ կերպով ընթանան ժողովրդավարական գործընթացներն ու բոլոր ոլորտներում բացառապես գերակայեն նորովի զարգացումները:

***Հարգանքներով***

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ